

ԼՂՏ ՎԱՐՉԱՊԵՏԸ ԱՄՆ-Ի ՆԱՅՈՑ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻՆ ԱՌ-ԱԶՆՈՐԴԱՐԱՆՈՒՄ

Նոկտեմբեր 11ին թեմիս բարեջան առաջնորդ Յովնան արքեպս. Տերպերեանի կողմէ պաշտօնական հիւրասիրութիւն մը փրութեցաւ Պրոպէքի Առաջնորդարանին մէջ՝ Ղարաբաղէն նոր ժամանած վարչապետ Պր. Անուշաւան Դանիելեանի եւ ընկերակցող անձնատրութիւններուն:

Տիւրասիրութեան ներկայ եղան թեմիս առաջնորդ Սրբազան՝ Յովնան արքեպս. Տերպերեան, Վաչէ արքեպս. Յովսէփեան, Լուս Անճելըսի Նայասարանի հիւպարոս Պր. Գագիկ Կիրակոսեան, Մարիա Միերանեան (Նայկական Նիմնադրամի արեւնապետի), Արա Ալիշեան (Նայկ. Նիմնադրամի փոխարեւնապետ), Տ. Տաճար ծ. վրդ. Եպարդմեան, Տ. Զաւեն առաջ քինյ. Արզումանեան, Տ. Միսիան առաջ քինյ. Մխսեան, Տ. Շնորհք քինյ. Տեմիրճեան, Ռիչըրդ Մուշեղեան, Արմէն Նամբար, Լիլի Պալեան, Օննիկ Մեհրապեան, Յովսէփ Կանիմեան, Վարդան Բարսեղեան, Բարսեղ Գարթալեան, Արմէն Ճանեան, Օշին Քէշիշեան, Արամ Մարտարեան եւ Դեւան Արիոսարամեան:

Պաշտօնական ճաշի ընթացքին խօսք առնելով առաջնորդ Սրբազան Նայրը ողջունեց Ղարաբաղի յարգարժան վարչապետը եւ պաշտօնական միտք հիւրերը, ընդգծելով Ղարաբաղի կարեւորութիւնը մեր ժողովուրդի պարմութեան մէջ, ինչպէս նաեւ այդ փարածաշըրջանը պահպանելու եւ անոր բարգաւաճման գործնականապէս նպաստելու բոլորիս անվերապահ պարտականութիւնը: Պր. վարչապետը, իր կարգին, հակիրճ կերպով անդրադարձաւ Ղարաբաղը յուզող անմիջական պահանջներուն եւ խոր շնորհակալութիւն յայտնեց Նայ Եկեղեցոյ եւ հայ ժողովուրդի նիւթական թէ բարոյական գորակցութեան, որոնց ճամբով Ղարաբաղը աստիճանաբար կը լուծէ իր փնտրեցական, ընկերային եւ մարդկային հիմնական հարցերը: «Նամահայկական Նիմնադրամ»ը այդ կարեւոր կառոյցներէն մեկն է, որ կը հեմարայնէ յիշեալ խնդիրները պետական մակարդակի վրայ:

Երկուստեք բարեմաղթութիւններ կատարուեցան Ղարաբաղի եւ Նայասարանի, հայ ժողովուրդի խաղաղութեան, երկրի վարչական ու փնտրեցական կայունութեան եւ ժողովուրդի բարօրութեան համար:

Պարմական այս այցի յիշարակը պահելու համար խմբական լուսանկարներ առնուեցան Առաջնորդարանի մուտքին, որմէ ետք հիւրերը հրաժեշտ առին:

ԴԻԲԱՆ ԱՌ-ԱԶՆՈՐԴԱՐԱՆԻ